

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
Սահմանադրական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1905/B01 «ՀՀ Սահմանադրական իրավունք-1»

Որակավորման

աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Ն. Այվազյանը

ԵՊՀ հրատարակչություն

**ԵՐԵՎԱՆ 2013**

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1905/B01. ՀՀ Սահմանադրական իրավունք – 1(4 կրեդիտ)  
Շաբաթական 4 ժամ (40 դասախոսություն, 16 սեմինար, 8 գործնական, 56 ինքնուրույն աշխատանք)  
2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

### **Դասընթացի նպատակը**

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ ՀՀ իրավունքի համակարգի միջուկը հանդիսացող ՀՀ Սահմանադրության էության և բովանդակության, սահմանադրական կարգի հիմունքների, ՀՀ քաղաքական համակարգի, դրա տարրերի, մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև քաղաքացիության հիմնախնդիրների մասին:

### **Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա

#### **գիտելիք և իմացություն**

- ա) Սահմանադրական իրավունքի, որպես ՀՀ իրավունքի համակարգի առաջատար ճյուղի, առանձնահատկությունների,
- բ) ՀՀ իրավունքի համակարգում ՀՀ սահմանադրության ունեցած տեղի և դերի,
- գ) ՀՀ հասարակական կյանքում սահմանադրական կարգի հիմունքների որոշիչ դերի,
- դ) ՀՀ քաղաքական համակարգի տարրերից յուրաքանչյուրի դերի և նշանակության,
- ե) մեր երկրում մարդու իրավունքների և ազատությունների իրավական ամրագրման և գործնական իրականացման կառուցակարգերի,
- զ) քաղաքացիության ինստիտուտի հիմնախնդիրների մասին:

#### **Ունակ կլինի**

- ա) ընկալելու «սահմանադրություն» երևույթի՝ հասարակության զարգացման պատմական անհրաժեշտությամբ պայմանավորված, ի հայտ գալու խնդիրը,
- բ) քննարկումներ և բանավեճեր անցկացնելու սահմանադրության կարգավորման առարկայի, դրա նորմերի գործնական իրականացման կառուցակարգերի և առաջադրվող այլ խնդիրների շուրջ,
- գ) վեր հանել Սահմանադրական իրավունքը կազմող օրենսդրության և մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման ոլորտներում առկա խնդիրներն ու տալու դրանց լուծումները,
- դ) վերլուծել ՀՀ քաղաքական համակարգի տարրերից յուրաքանչյուրի կազմակերպման, իրավական վիճակի և գործունեության իրավական կարգավորման վիճակը, ընդունված ակտերի իրավակիրառ պրակտիկան և կատարելու համապատասխան առաջարկություններ և եզրահանգումներ:

#### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված է 2 ընթացիկ բանավոր ստուգում՝ յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր : Առաջին ընթացիկ ստուգումը ներառում է թեմաներ 1-7-ը, երկրորդ ընթացիկ ստուգումը՝ թեմաներ 8-15-ը: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

#### **Դասընթացի նկարագրությունը, բովանդակությունը**

## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

### Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունքը որպես իրավունքի ճյուղ և գիտություն

#### Թեմա 1

#### Հայաստանի սահմանադրական իրավունքի ճյուղի հասկացությունը և առարկան (3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը: «Սահմանադրական իրավունք» և «պետական իրավունք» հասկացությունների հարաբերակցությունը:
2. Սահմանադրական իրավունքի առարկան և մեթոդը: Սահմանադրական իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունների (երկու խումբ՝ մարդ-պետություն և պետական իշխանության կառուցվածքը) հիմնարար բնույթը և նրա կարգավորման մեթոդների (պարտավորեցման, արգելման, թույլատրման, իշխանական-հրամայական) բովանդակությունը:
3. Սահմանադրաիրավական նորմերը և ինստիտուտները: Սահմանադրական իրավունքի նորմերի նմանությունն ու տարբերությունը (բովանդակությամբ, աղբյուրներով, սուբյեկտներով, կառուցվածքով, տեսակներով) իրավունքի այլ ճյուղերի նորմերից: Այդ նորմերի դասակարգումն՝ ըստ բովանդակության, իրավաբանական ուժի, տարածքի, հանձնարարականի բնույթի (լիազորող, պարտավորեցնող, արգելող), նյութականի և ընթացակարգայինի: Սահմանադրաիրավական ինստիտուտների կազմավորման հիմնական չափանիշները և տեսակները:
4. Սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները: Սահմանադրաիրավական հարաբերությունների առանձնահատկությունները (ունեն՝ սեփական բովանդակություն, սուբյեկտների առանձնահատուկ կազմ, բնութագրվում են մեծ բազմազանությամբ) և տեսակները (ընդհանուր բնույթի, իրավական վիճակը, մշտական և ժամանակավոր, նյութական և ընթացակարգային): Այդ հարաբերությունների կապը իրավաբանական փաստերի հետ: Սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների առանձնահատկությունները և տեսակները:
5. Սահմանադրական իրավունքի աղբյուրների (դրանց ձևավորման գործում բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի դերը) տեսակները (նյութական և իրավական):
6. Սահմանադրական իրավունքի համակարգը (սկզբունքները, ինստիտուտները, նորմերը), դրա կապը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համակարգի հետ:
7. Սահմանադրաիրավական պատասխանատվության առանձնահատկությունը և սուբյեկտները:
8. Սահմանադրական իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում: Նրա կապը իրավունքի մյուս ճյուղերի հետ:
9. Սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական միտումները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունքի զարգացման (սոցիալականացումը, ժողովրդավարացումը, միջազգայնացումը) միտումները:

**Հարցեր 1-7** - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:

**Հարցեր 1-5** – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում :

**Հարցեր 6, 8, 9** – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը (Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012, էջեր 15-45):

**Թեմա 2**  
**Սահմանադրական իրավունքի գիտությունը**  
**(1 ժամ դասախոսություն)**

1. Սահմանադրական իրավունքի գիտության առարկան, համակարգը և աղբյուրները:
2. Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները: Պատմական, իրավահանձնատական, վիճակագրական, համակարգային մոտեցման և հետազոտության կոնկրետ-սոցիոլոգիական մեթոդների կիրառության առանձնահատկությունները:
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գիտության զարգացումն արդի փուլում:
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի դասընթացը:

**Հարցեր 1-2** - կարդացվում է դասախոսություն:

**Հարցեր 3-4** – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար (Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012, էջեր 46-55):

**ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ**  
**Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը**

**Թեմա 3**  
**Սահմանադրության տեսական հիմունքները**  
**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**

1. Սահմանադրության հասկացությունը (նորմատիվ ակտ է, ունի բարձրագույն իրավաբանական ուժ և հատուկ կարգավորման առարկա) և հատկանիշները (ընդունվում է ժողովրդի կողմից, նրա անունից, ունի հիմնարար և համապարփակ բնույթ), որոնցով տարբերվում է մյուս իրավական ակտերից:
2. Սահմանադրության հատուկ իրավաբանական բնույթը, նրա բարձրագույն իրավաբանական ուժի և այլ իրավական ակտերի նկատմամբ գերակայության բովանդակությունը: Մյուս ակտերի նկատմամբ Սահմանադրության գերակայությունը պայմանավորող հանգամանքները: Սահմանադրության և միջազգային-իրավական նորմերի հարաբերակցությունը:
3. Սահմանադրության էությունը: Սահմանադրության ծագման բնական անհրաժեշտությունը և նրա բովանդակության պատմական զարգացումը: Սահմանադրության էության վերաբերյալ տարբեր մոտեցումները (արևմտյան և մարքսիստական):
4. Սահմանադրության տեսակները և ձևերը: Սահմանադրության դասակարգումը ըստ որոշակի չափանիշների. (կառավարման ձևի, քաղաքական ռեժիմի, կառուցվածքի ձևի, ընդունման կարգի, իրավաբանականի և փաստացիի): Սահմանադրության ներքին և արտաքին ձևերի (կոշտ և ճկուն, համառոտ և ծավալուն, գրված և չգրված) բազմազանությունը պայմանավորող հանգամանքները: Սահմանադրության կառուցվածքի բովանդակությունը:
5. Սահմանադրության գործառնությունները (ֆունկցիաները): Իրավական, քաղաքական և գաղափարական գործառնությունների բովանդակությունը:
6. Սահմանադրության գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա: Սահմանադրության նորմերի անմիջական գործողության բովանդակությունը:
7. Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը: Սահմանադրության ընդունման ժողովրդավարական կարգերի առավելությունները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը:

**Հարցեր 1-7** - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը (տես «ՀՀ Սահմանադրական իրավունք» դասագիրք, Երևան, 2012թ., գլուխ 3) և ներկայացնում խնդրահարույց հարցերը:

**Հարցեր 1,2,5,7** – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:

**Հարցեր 3,4,6** - գործնական պարապմունք: Ուսանողները նախապես ծանոթանում են «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքի 3-րդ գլխի նյութերին, ուսումնասիրում են Եվրոպական մի քանի երկրների սահմանադրությունների (տես Конституции государств Европейского Союза... под ред. Окунькова Л. А. и др., М., 1997) կառուցվածքը, կարգավորման ոլորտները, և համեմատում ՀՀ Սահմանադրության հետ ու ցույց տալիս առանձնահատկությունները:

## **ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ**

### **Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները**

#### **Թեմա 4**

#### **Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Սահմանադրական կարգի հասկացությունը: Դրա բովանդակության պայմանավորված լինելը Սահմանադրության առաջին գլխում ամրագրված հիմնադրույթներով: Սահմանադրական կարգի միջազգային նշանակությունը:
2. Սահմանադրական կարգի ինստիտուտի տեղը ՀՀ սահմանադրական իրավունքում: Այդ ինստիտուտի նորմերի ազդեցությունը Սահմանադրության մյուս ինստիտուտների ձևավորման վրա:

**Հարցեր 1-2** - անցկացվում է դասախոսություն :

**Հարցեր 1-2** - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:

**Հարցեր 1-2** - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինար պարապմունքն անցկացվում է խմբային քննարկման միջոցով):

#### **Թեմա 5**

#### **Հայկական պետության սահմանադրական բնութագիրը (2 ժամ դասախոսություն)**

1. Ինքնիշխան պետություն: Ինքնիշխանության իրավաբանական բովանդակության դրսևորման ձևերը (պետական իշխանության գերակայություն, միասնություն և անկախություն):
2. Ժողովրդավարական պետություն: Պետության ժողովրդավարական բնույթի դրսևորման եղանակները (քաղաքացիական հասարակության առկայություն, իշխանության պատկանելի ժողովրդին, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովում, իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացում):
3. Սոցիալական պետություն: Սոցիալական պետության բնորոշ գծերը (աշխատանքի իրավունք, տնտեսության իրացում, նվազագույն կենսամիջոցների ապահովում):

4. Իրավական պետություն: Իրավական պետության բնորոշ գծերը (իրավունքի կամ օրենքի գերակայություն, փոխադարձ պատասխանատվության ապահովում, իշխանությունների բաժանում):
5. Աշխարհիկ պետություն: Աշխարհիկ պետության բնորոշ գծերը, որոնցով այն տարբերվում է կղերական բնույթի պետություններից:

**Չարդեր 1-5** - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:

**Չարդեր 1-5** – ինքնուրույն աշխատանք: Թեմայի նշված հարցերն ընդհանուր գծերով մատուցվել է ուսանողներին «Պետության և իրավունքի տեսություն» առարկայից: Ուսանողները նախօրոք ծանոթանում են գրականությանը (Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» իրատ., Երևան, 2012, էջեր 120-145)՝ սահմանադրաիրավական առումով ընկալելու քննարկվող հարցերի բովանդակությունը և ստացված նոր գիտելիքների տեսանկյունից գնահատելու, թե պետության ուսումնասիրվող բնութագրիչները որքանով են հատուկ Հայոց պետականությանը:

## **Թեմա 6**

### **Պետական իշխանության կազմակերպման հիմունքները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Իշխանության պատկանելը ժողովրդին: Ժողովրդաիշխանության սկզբունքի ծագումն ու զարգացումը: Ժողովրդի ինքնիշխանության և պետական ինքնիշխանության հասկացությունն ու հարաբերակցությունը: Ժողովրդաիշխանության և ժողովրդավարության սկզբունքների հարաբերակցությունը և դրա նենգափոխման վնասակար հետևանքները:
2. Ժողովրդաիշխանության իրացման ձևերը: Անմիջական ժողովրդաիշխանության տեսակները: Հանրաքվեի հասկացությունը և տեսակները (պարտադիր, ֆակուլտատիվ, պլեբիսցիտ), սուբյեկտները, առարկան և իրավաստեղծ նշանակությունը: Հանրաքվեի նշանակումը բացառող հանգամանքները: Ժողովները, հանրաքվեները, երթերը և ցույցերը որպես անմիջական ժողովրդաիշխանության օժանդակ ձևեր: Ազատ ընտրությունների սկզբունքի բովանդակությունը: Ժողովրդաիշխանության ներկայացուցչական ձևերը (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ): Խորհրդարանի և Նախագահի միջոցով իշխանության մյուս թևերի նկատմամբ ժողովրդի վերահսկողության բովանդակությունը:
3. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Դրա բովանդակությունը, ծագումն ու զարգացումը: Իշխանությունների տարանջատման սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները կառավարման տարբեր ձևերի դեպքում:

**Չարդեր 1-3** - անցկացվում է դասախոսություն

**Չարդեր 1-3**-ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ:

**Չարդեր 1-3** - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

**Թեմա 7**  
**Տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային հարաբերությունների**  
**սահմանադրական հիմունքները**  
**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**

1. Տնտեսական հարաբերությունների սահմանադրական հիմունքները: Տնտեսական հարաբերությունների հասկացությունը և ենթարկվելը տնտեսական օբյեկտիվ օրենքներին: Պետության դերը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում: Սեփականության ձևերի դերը տնտեսական հարաբերությունների ձևավորման գործում: Տնտեսական հարաբերությունների սկզբունքները: Աշխատանքի իրավունքի դերը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում:
2. Սոցիալական հարաբերությունների սահմանադրական հիմունքները: Սոցիալական համակարգի հասկացությունը, կառուցվածքն ու բովանդակությունը: Սոցիալական հավասարության սկզբունքի իրականացումը: Ընտանիքի հիմնախնդիրը սոցիալական հարաբերությունների համակարգում:
3. Հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքները: Հոգևոր-մշակութային հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները: Գիտության, կրթության և կրոնի դերը անձի հոգևոր զարգացման և դաստիարակության առաջընթացի խնդրում: Եկեղեցու և պետության փոխհարաբերությունների իրավական կարգավորումը:

**Հարցեր 1-3** - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննարկման:

**Հարցեր 1-3** -գործնական պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, իրավական ակտերին և քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը:

**Թեմա 8**  
**Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգը**  
**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի հասկացությունը և տարրերը: Քաղաքական համակարգերի դասակարգումն ըստ քաղաքական ռեժիմների: Ժողովրդավարական քաղաքական համակարգի հատկանիշները (բազմակարծություն, բազմակուսակցություն):
2. Պետությունը հասարակության քաղաքական համակարգում: Պետության առաջատար բնույթը (ամենազանգվածային կազմակերպությունն է, ինքնիշխան է, ակտերն ունեն գերակայություն, միայն պետությունն ունի հարկադրման ապարատ) քաղաքական համակարգի մյուս տարրերի նկատմամբ:
3. Կուսակցությունները ՀՀ քաղաքական համակարգում: Կուսակցությունների նպատակները, կազմավորման կարգը և ֆինանսավորման աղբյուրները: Կուսակցությունների մասնակցությունը պետական իշխանության ձևավորմանը և իրականացմանը: Նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները (գործունեության արգելում և լուծարումը):
4. Հասարակական միավորումները ՀՀ քաղաքական համակարգում: Նրանց և կուսակցությունների նմանություններն ու տարբերությունները: Հասարակական

միավորումների տեսակները և կազմակերպման կարգը: Նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

5. Ձանգվածային լրատվության միջոցների խնդիրները ՀՀ քաղաքական համակարգում: Նրանց տեսակները, կազմակերպման կարգը, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը: Պետական իշխանության իրականացմանը ՁԼՄ-ների մասնակցության առանձնահատկությունները:

**Հարցեր 1-5** - անցկացվում է դասախոսություն: Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանը և հետաքրքրություն ներկայացնող հարցերը առաջադրում քննարկման:

**Հարցեր 2, 3, 5** - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով

**Հարցեր 3, 4 և 5** - գործնական պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են կուսակցությունների, հասարակական միավորումների և ՁԼՄ-ների մասին Հանրապետության օրենսդրությանը և «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքում թեմայի վերաբերյալ առկա նյութերին և քննարկում նշված տարրերի տեղի և դերի առանձնահատկությունները ՀՀ քաղաքական համակարգում:

## **ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ**

### **Անձի իրավական կարգավիճակի հիմունքները**

#### **Թեմա 9**

#### **Մարդու և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակը (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը և դրա վրա ազդող հանգամանքները (քաղաքացիությունը, հիմնական իրավունքներն, ազատություններն ու պարտականությունները, գործունակությունը, սոցիալական վիճակը):
2. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները (իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանուր լինելը, հավասարությունը (իրերեք դրսևորումներով), անօտարելիությունը):
3. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունը և բովանդակությունը: Մարդու հիմնական (սոցիալ-տնտեսական, քաղաքական, անձնական) իրավունքների սահմանադրական ամրագրման օբյեկտիվ բնույթը՝ (որպես անձի և պետության գոյության պայմանի): Սահմանադրական իրավունքների և ազատությունների բնորոշ գծերը, որոնցով դրանք տարբերվում են իրավունքի այլ ճյուղերի նորմերով կարգավորվող իրավունքներից:
4. Օտարերկրացիների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Կացության ժամանակավոր, մշտական, հատուկ կարգավիճակների սուբյեկտները և առանձնահատկությունները:
5. Մարդու իրավունքների միջազգային իրավական հիմքերը: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերի արտացոլումը ներպետական օրենսդրության մեջ:
6. Իրավունքների և ազատությունների սահմանափակման հասկացությունը և հիմքերը: Սահմանափակման ենթակա և սահմանափակման ոչ ենթակա իրավունքները:
7. Իրավունքների և ազատությունների դասակարգումը: Դասակարգման հիմքերը և չափանիշները (մարդու իրավունքներ և քաղաքացու իրավունքներ, անհատական և կոլեկտիվ): Մարդու իրավունքների դասակարգումը ըստ բովանդակության (անձնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական):

**Հարցեր 1-7** –Դասախոսություն՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով:



Հարցեր 1-7- ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են դասախոսությունների ընթացքում:

**Հարցեր 3-6** - անցկացվում է սեմինար պարապմունք. ուսանողները քննարկում են մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի սահմանադրաիրավական ամրագրումը, ՀՀ-ում օտարերկրացիների կացության կարգավիճակի օրենսդրական ամրագրման վիճակը և փորձում առաջարկություններ ներկայացնել նշված ոլորտները կարգավորող օրենսդրության բարելավման ուղղությամբ:

### **Թեմա 10** **Անձնական իրավունքներ և ազատություններ** **(2 ժամ դասախոսություն)**

1. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք: Անազատության մեջ գտնվող անձի արժանապատվության պաշտպանության միջոցները:
2. Կյանքի իրավունքը: Մարդու կյանքի իրավունքի պաշտպանության հիմնական ուղղությունները (մահապատժի վերացումը, բնակչության բժշկական սպասարկումը, վերարտադրողական իրավունքը, հանցավորության դեմ պայքարի ուժեղացումը):
3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը և դրա երաշխիքները:
4. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը. (ոչ պաշտոնական շփումների շրջանակը, հարկադրված կապերը, մարդու ներաշխարհը, ընտանեկան կապերը, կրոնական համոզմունքները և այլն):
5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Բնակարանի և բնակիչների հասկացությունը; Բնակարան մուտք գործելու իրավունքի սուբյեկտները և պայմանները:
6. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը:
7. Խղճի և հավատքի (կրոնի) ազատության իրավունքը: Կրոնական կազմակերպությունների ձևավորման կարգը և իրավական վիճակը:
8. Մտքի (արտահայտվելու) և խոսքի ազատության իրավունքը:

**Հարցեր 1-8** - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են ներկայացվող իրավունքների վերաբերյալ գրականությանը և օրենսդրական ակտերին, վեր հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման:

### **Թեմա 11** **Քաղաքական իրավունքներ և ազատություններ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Միավորվելու իրավունք: Քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու և դուրս գալու կամավորության սկզբունքը:
2. Խաղաղ, առանց զենքի ժողովներ և հավաքներ անցկացնելու իրավունք (հասկացությունը, բովանդակությունը և իրականացման կարգը):
3. Տեղեկատվության ազատության իրավունք: Հասկացությունը և չարաշահելու դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները:
4. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք: Դրա բովանդակությունը և դրսևորման ձևերը (ընտրելու և ընտրվելու իրավունք, պետական (քաղաքացիական)

ծառայության հավասար հնարավորության, արդարադատության իրականացմանը մասնակցելու, պետական մարմիններին դիմելու իրավունք):

**Չարդեր 1-4** - անցկացվում է դասախոսություն:

**Չարդեր 1-4** - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման եղանակով: Ուսանողները ծանոթանում են ՀՀ քաղաքացիների քաղաքական իրավունքների վերաբերյալ գրականությանը և օրենսդրական ակտերին, վեր հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում սեմինար պարապմունքի քննարկմանը:

## **Թեմա 12**

### **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ ու ազատություններ (4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**

1. Մասնավոր սեփականության և ժառանգման իրավունքի բովանդակությունը: Մտավոր սեփականության պաշտպանությունը:
2. Աշխատանքի ընտրության ազատության բովանդակությունը: Պետության պարտականությունները այդ իրավունքի իրականացման գործում:
3. Ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունքի բովանդակությունը:
4. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք:
5. Բավարար կենսամակարդակի, կենսապայմանների բարելավման և բնակարանի իրավունք:
6. Ամուսնության և ընտանիք կազմելու իրավունք: Մայրության և մանկության պաշտպանությունը: Այդ խնդրի լուծման վիճակը գյուղաբնակ ընտանիքների հարցում:
7. Սոցիալական ապահովության իրավունքը: Ապահովագրական (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում) և սոցիալական (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում) կենսաթոշակների բովանդակությունը:
8. Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքը: Պետության կողմից բնակչության առողջության պահպանման կապակցությամբ իրականացվող սանիտարահամաճարակային միջոցառումների տեսակները: Բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային և արտահիվանդանոցային եղանակները: Այդ ոլորտում անձին վերապահված իրավունքները:
9. Կրթության իրավունքը: Բարձրագույն կրթության իրավունքի երաշխիքները:
10. Ստեղծագործության ազատության իրավունք: Գիտական, ստեղծագործության, հետազոտության, դասավանդման, ուսումնասիրության ազատություն: Հեղինակային իրավունքի բովանդակությունը:
11. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

**Չարդեր 1-3 և 7-9** - անցկացվում է դասախոսություն:

**Չարդեր 4-6 և 10-11** - անցկացվում է գործնական պարապմունք՝ «ՀՀ Սահմանադրական իրավունք» (2012թ.) դասագրքի նյութերի և նախօրոք հանձնարարված այլ գրականության, նորմատիվ ակտերի ուսումնասիրության արդյունքում ծագած խնդրահարույց հարցերի վերաբերյալ քննարկում ծավալելով:

## **Թեմա 13**

### **Իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքները (2 ժամ դասախոսություն)**

1. Իրավունքների և ազատությունների երաշխիքների հասկացությունը և բովանդակությունը:
2. Իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության պարտականությունն է: Պետական իշխանության առանձին մարմինների

պարտականությունները մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում:

3. Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը: Այն երաշխավորող հանգամանքները (դատարանների իրական անկախությունը, անկողմնակալությունը, գործի քննության հրապարակայնությունը, արդարությունը):
4. Իրավունքների և ազատությունների միջազգային իրավական պաշտպանությունը, այդ գործում միջազգային կառույցների (ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Մարդու իրավունքների հանձնաժողովը, Փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովը, Կանանց իրավունքների հանձնաժողովը, միջազգային դատարանները և ուրիշներ) դերը:
5. Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանությունը: Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության սկզբունքների կիրառման հնարավորությունը ինքնապաշտպանության դեպքում:
6. Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը:
7. Անմեղության կանխավարկածը: Դրա բովանդակությունը:
8. Օրենքի հետադարձ ուժի արգելումը:

**Հարցեր 1-2 և 7-8** - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով:

**Հարցեր 3-6** – Ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են մարդու իրավունքների պաշտպանության տարբեր եղանակների վերաբերյալ գրականությունը, օրենսդրական և միջազգային իրավական ակտերը և խնդրահարույց հարցերը ներկայացնում դասախոսության ժամանակ:

#### **Թեմա 14**

### **Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները (2 ժամ դասախոսություն)**

1. Սահմանադրական պարտականությունների հասկացությունը և հիմնական գծերը: Դրանց տարբերությունը իրավունքի այլ ճյուղերի կողմից սահմանված պարտականություններից:
2. Սահմանադրության և օրենքների պահպանումը: Այդ կապակցությամբ օրենսդրությամբ ներկայացվող պահանջները. (օրենքները չխախտելը, նպաստելը դրանց իրականացմանը, պահպանել սահմանադրական արգելքները, հարգել այլոց արժանապատվությունը):
3. Հայրենիքի պաշտպանությունը: Հայրենիքի պաշտպանության հասկացությունը և օրենսդրական ամրագրումը: Պարտադիր զինվորական ծառայության դեպքում նախատեսվող տարկետումների հիմքերը: Պայմանագրային և այլընտրանքային ծառայության բովանդակությունը:
4. Այլ պարտականություններ (հուշարձանների պաշտպանությունը, բնության և շրջակա միջավայրի պահպանությունը, հոգատարությունը երեխայի և անաշխատունակ ծնողի նկատմամբ, հիմնական ընդհանուր կրթություն ստանալը):

**Հարցեր 1-4** - անցկացվում է դասախոսություն:

#### **Թեմա 15**

### **Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

1. Քաղաքացիության հասկացությունը: Պետության և քաղաքացու միջև կապերի բնույթը (իրավական և կայուն, անձին որպես քաղաքացի ճանաչելը, փոխադարձ իրավունքները և պարտականությունները): Հպատակությունը և անձին չհանձնելը:

2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները: Քաղաքացիության ընդհանուր (արյան և հողի իրավունքի) և մասնավոր (իրավահավասարության, կամավորության, քաղաքացիությունից զրկելու անթույլատրելիության, բացառիկության, արտասահմանում ապրողների քաղաքացիության պահպանման, ազգությամբ հայերի քաղաքացիության ձեռքբերման պարզեցվածության, ամուսնու քաղաքացիության մեխանիկական ձեռքբերման մերժման) սկզբունքների բովանդակությունը: Երկքաղաքացիության (բազմաքաղաքացիության) միջազգային իրավական և ներպետական խնդիրները:
3. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքերը (ծնունդը, քաղաքացիության ճանաչումը, ստանալը, վերականգնվելը, խմբակային ձեռքբերելը, այլ հիմքեր) և կարգը ըստ ՀՀ քաղաքացիության մասին օրենքի:
4. ՀՀ քաղաքացիության դադարեցումը: Դրա հիմքերը (դուրս գալը, այլ պետության քաղաքացիություն ընդունելը) և կարգը: Քաղաքացիությունից դուրս գալուն խոչընդոտող հիմքերը: Քաղաքացիությունից զրկելը որպես բացառիկ միջոց:
5. Երեխաների քաղաքացիության որոշման կարգը: Երեխաների քաղաքացիության որոշման դեպքում երեխայի շահերի հաշվառումը:
6. Քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգը: Այդ գործընթացին մասնակցող մարմինների (ՀՀ Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը, նրա աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչությունը, կառավարությունը, ՀՀ ոստիկանությունը, արտաքին գործերի նախարարությունը և դիվանագիտական ծառայությունները) պարտականությունները:
7. Փախստականների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Փախստականի կարգավիճակ ստանալու կարգը: Փախստականի կարգավիճակ ստանալու դիմումի մերժումը և դրա գանգատարկման կարգը:
8. Քաղաքական ապաստանի իրավունքը և իրացման եղանակները: Դիվանագիտական ապաստանի ինստիտուտը:

**Հարցեր 1-8** - անցկացվում է դասախոսություն:

**Հարցեր 1-5** – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: **Հարցեր 6-8** - ուսանողները նախօրոք ծանոթանում են քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգին և փորձում են կազմել քաղաքացիության մեջ ընդունվելու և դուրս գալու վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ձեռք բերելու վերաբերյալ փաստաթղթերը: Ծանոթանում են քաղաքական ապաստանի և դիվանագիտական ապաստանի ինստիտուտներին:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **Բոլոր թեմաների համար պարտադիր գրականություն**

1. **Авакьян С.А.** Конституционное право России. В 2-х томах. М.,2006.
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., Երևան, 2012:

### **Նորմատիվ ակտեր**

1. Հռչակագիր «Հայաստանի անկախության մասին» /ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին/:
2. ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» /ընդունվել է 1991 թ. սեպտեմբերի 23-ին/:
3. «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը /ընդունվել է 1991թ. սեպտեմբերի 25-ին/ :

4. Հայաստանի Հանրապետության 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրությունը (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով ու լրացումներով):
5. Конституция зарубежных государств /составитель и автор введения и вступительных статей проф. Маклаков В.В./ Изд. "БЕК", М., 1997.
6. Конституции государств Европейского Союза /по ред. Окунькова Л. А. и др./ Изд. группа ИНФРА. М-НОРМА, М., 1997.
7. Конституции государств Европы: В 3 т. М., 2001.
8. Новые конституции стран СНГ и Балтии. Изд "Юристь", М., 2000.
9. Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990-1995 թթ./ Երևան, 1995:
10. Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1995-1999/: Գիրք «Ա և «Բ»: Երևան, 1999:

## **1. ԲՈՒՆՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

### **ա/ տեսական գրականություն**

1. **Авакьян С.А.** Конституционное право. Энциклопедический словарь. Изд. "Норма", М., 2000.
2. **Автономов А.С.** Конституционное (государственное) право зарубежных стран. М., 2005.
3. **Баглай М.Б.** Конституционное право Российской Федерации. М., 2005.
4. Государственное право Германии /издатели: И. Изензее, П. Кирххов/. В 2-х томах, М., 1994.
5. **Енгибарян Р.В.** Сравнительное конституционное право. М., 2005
6. **Енгибарян Р.В.** Конституционное развитие в современном мире. М., 2007.
7. **Зиновьев А.В.** Конституционное право России: проблемы теории и практики. М., 2000.
8. **Козлова Е.И.Кутафин О. Е.** Конституционное право России. М., 2006.
9. Конституционное /государственное/ право зарубежных стран /под ред. проф. Страшуна Б. А./ В 4-х томах. Том 1, М., 1993, том 2 М., 1995, том 3, М., 1998.
10. **Маклаков В.В.** Конституционное право зарубежных стран (Общая часть). М., 2006.
11. Сравнительное конституционное право /отв. ред. проф. Чиркин В. Е./ М., 2002.
12. **Խաչատրյան Հ.Մ.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1997:

### **բ/ նորմատիվ ակտեր**

1. Հռչակագիր «Հայաստանի անկախության մասին» /ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին/:
2. ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» /ընդունվել է 1991 թ. սեպտեմբերի 23-ին/:
3. «Անկախ պետականության հիմնադրությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը /ընդունվել է 1991թ. սեպտեմբերի 25-ին/ :
4. Հայաստանի Հանրապետության 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրությունը (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով ու լրացումներով):
5. Конституция зарубежных государств /составитель и автор введения и вступительных статей проф. Маклаков В.В./ Изд. "БЕК", М., 1997.
6. Конституции государств Европейского Союза /по ред. Окунькова Л. А. и др./ Изд. группа ИНФРА. М-НОРМА, М., 1997.
7. Конституции государств Европы: В 3 т. М., 2001.
8. Новые конституции стран СНГ и Балтии. Изд "Юристь", М., 2000.

9. Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990-1995 թթ./ Երևան, 1995:
10. Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1995-1999/: Գիրք «Ա և «Բ»: Երևան, 1999:

## **2.ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ**

### **Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունքն որպես իրավունքի ճյուղ և գիտություն ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ**

#### **Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն**

#### **ա/ տեսական գրականություն**

1. **Авакьян С.А.** Конституционное право России. В 2-х томах, т. 1. М., 2006.
2. **Արիստոտել**, Աթենական հասարակարգը. Արիստոտելը Աթենքի սահմանադրության մասին /թարգմ. Ս. Հարությունյան, խմբագիր իրավ. գիտ դոկտոր Վ. Նազարյան/: Երևան, 2000:
3. **Այվազյան Ն.Ա., Այվազյան Վ.Ն.**, Սահմանադրության տեսության հիմնահարցեր: Երևան, 1998:
4. **Այվազյան Ն., Այվազյան Ա.**, Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005:
5. **Баглай М.Б.** Конституционное право Российской Федерации. М., 2005.
